

Նիկոլին, թէ ինքը կատարած է արդէն իւր յանձնառութիւնը. ուստի եւ կարող է եպիսկոպոսն երթալ իւր թեմը: Նիկոլ առարկեց ժողովուրդին զայրոյթը: Մեկքիսեղեկ ընձեռեց եպիսկոպոսին ձեռնադրութեան հաստատագիրն, որով կը հաստատէր նորընծայն իւր աթոռին վրայ իրրեւ առաջնորդ Լվովի եւ կը նզովէր եւ կը կապէր այն ամէնքը, որոնք կը համարձակէին հակառակիլ իր հրամանին կամ ընդդիմանալ եպիսկոպոսին: Կոնդակս տըրուած է 1626, Դեկտեմբեր 29ին⁸:

Նիկոլ եպիսկոպոս վերադարձաւ Լվով եւ ցոյց տուաւ ժողովրդեան կոնդակը: Բանադրանաց սպառնալիքը լռեցուց ժողովրդեան բարկութիւնը. «թէպէտ Հայերէն ոմանք ըմ-

⁸ Կոնդակիս իսկազիրը կը պահուի այժմ Վենետիկի Մխիթարեանց Դիւանին մէջ. Հ. Ղ. Տայեան յառաջ կը բերէ անկէ հետեւեալ տեղիքը. «Ձի եկաք ի յայտեղս օրհնեալ մայրաքաղաքն Իլով, իրրեւ ի յաթոռակալ տեղ. եւ տեսաք որ առաջնորդ չունէին. եւ բազում ժամանակս առանց առաջնորդի վարէին զկեանս իւրեանց. բազում անգամ մեզնէ առաջնորդ խնդրէին յիմ եպիսկոպոսաց. բայց ոչ կամեցայ զիմ եպիսկոպոսքն այս տեղս առաջնորդ դնել: Վասն որոյ ըստ խնդրոյ նոցա քննութիւն արարաք ի միջի մերում եպիսկոպոսիք. եւ ձեռնադրեցաք զՏէր Նիկողայոսն այստեղացի, Պարոն Եաղուպի որդին Թորոսեանց. եւ օրհնեցաք եպիսկոպոս մեր բարձր հայրապետական իշխանութեամբս...: Օրհնեցաք զհոգեւոր որդին մեր զտէր Նիկողայոսն արքեպիսկոպոս Լովա քաղքին... Գրեցաւ թվ. ՌՂԵ. Դեկտ. ամսոյ ԻԹ. ձեռամբ մեզաւոր գրչի բիւր քանքարոյ պարտական Սիմոն լոկանուն իրիցուիս: (Ստ.) Տեսոն տէր Մեկքիսէդ կաթողիկոս ամենայն Հայոց ծառայ Յիսուսի Քրիստոսի տվի զայս գիրս. ձեռագիր այս է»: Հմմտ. Բ ա զ մ ա վ է պ, 1921, էջ 397—398, ծան. 2: Ունիմ առջեւս Կոնդակիս լատիներէն թարգմանութեան պատճենը. տե՛ս Relatio brevis, էջ 188—191: